



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48  
hatsik.armavir@mta.gov.am

«11» դեկտեմբերի 2018թ.

ԹԻՎ 251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈՒ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Չեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի  
ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 04-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Հացիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» քիվ41 -Ն որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ համայնքի ավագանու նշված որոշումը, «Նորմատիվ  
իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի  
համաձայն, համայնքի ղեկավարի համապատասխան գրությամբ ներկայացվել է Հայաստանի  
Հանրապետության Արդարադատության նախարարություն՝ պետական իրավական  
փորձաքննության:

Առդիր՝ 146 թերթ:


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ Ժ/Պ



*Handwritten signature*

Ֆ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

11.12.2018թ.  
գ.Հացիկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԻԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48  
[hatsik.armavir@mta.gov.am](mailto:hatsik.armavir@mta.gov.am)

«04» դեկտեմբերի 2018թվականի N 41-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019  
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԷ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2019 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով 59604,1 հազար դրամ, ծախսերի գծով՝ 59604,1 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

